ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/14

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան, Ա. Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6491-2019 գրությամբ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 21.03.2019թ. թիվ 989 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 21.03.2019թ. թիվ 989 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 3-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 3-րդ մասի 7-րդ կետը՝ ներկայացնում եմ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի (ՀՎՀՀ՝ 84267968, էլեկտրոնային փոստ՝ euro-wedding@mail.ru, «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ) տվյալները: Վերջինս «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման արդյունքում հայտարարվել է ընտրված մասնակից և էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք այդպես էլ չեն ներկայացվել: Ձեզ եմ ներկայացնում «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և ընթացակարգի վարման այլ փաստաթղթերը:»:

3. <u>«Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2019թ. գրությամբ դիմել է «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6491-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին 13.03.2019թ. առաջարկել ներկայացնելու «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատաս-խանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընկերության էլեկտրոնային հասցեից՝ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը սահմանված ժամկետում, այն է 15.03.2018թ. Ընկերությանը պատկանող euro-wedding@mail.ru էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի կողմից սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, որը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ցանկանում ենք փաստել, որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու բոլոր ապացույցները:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 20.03.2019թ.-ի գրությանը /որին ծանոթացել ենք 21.03.2019թ./ անպատասխան թողնելուն, ապա հայտնում ենք, որ վերոնշված հանձնաժողովը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի ներկայացուցիչը 22.03.2019թ.-ին ներկայացրել է համապատասխան գրությունը /կցվում է/, համաձայն որի հայտնել է հետևյալը.

<<Ստանալով ձեր մարտի 21 արձանագրությունը պարզ է դարձել, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի հայտը ձեր կողմից մերժվել է երկրորդ փուլի փաստաթղթերը չուղարկելու պատճառով: Բայց մեր կողմից փաստաթղթերը ուղարկվել է դեռևս մարտի 15, ինչը հայտնել եմ Ձեզ նաև հեռախոսազանգի միջոցով: Ինչ վերաբերվում է Ձեր այն գրությանը, որ հեռախոսազանգերին չեմ պատասխանում, ապա հայտնեմ, որ ես զբաղվում եմ ոչ միայն սննդի մատակարարումով, այլ նաև ֆուրշետի դասընթացներով և այլ տեսակի միջոցառումների կազմակերպման աշխատանքներով և միգուցե զբաղվածությանս պատճառով այդ պահին անհնար է եղել պատասխանել զանգերին: Ի հավաստումն որ իմ ընկերությունը ներկայացրել է և ունի փաստաթղթերը կից ներկայացնում եմ փաստաթղթերը՝ այս անգամ նաև թղթային տարբերակով>>:

Վերոնշված գրությունից պարզ է դառնում, որ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը 21.03.2019թ. ծանոթանալով Պատվիրատուի գրության հետ՝ պահանջվող որակավորման փաստաթղթերը ներկայացվել է նաև թղթային եղանակով, այդպիսով հաստատելով, որ որակավորման փաստաթղթերը առկա են և եթե ինչ-ինչ պատճառներով Պատվիրատուն չի

ստացել էլեկտրոնային փոստի միջոցով, ապա այդ փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև թղթային տարբերակով:»:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել են «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն հայտ է ներկայացրել հայտարարված «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին 13.03.2019թ. առաջարկել ներկայացնելու «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Մասնակցի էլեկտրոնային հասցեից՝ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում, այն է 15.03.2018թ. Մասնակցին պատկանող euro-wedding@mail.ru էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6491-2019 գրությամբ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, որը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարվել է «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին 13.03.2019թ. առաջարկել ներկայացնելու «ՏԴՊԱԿ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Մասնակցի էլեկտրոնային հասցեից՝ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում, այն է 15.03.2018թ. Մասնակցին պատկանող euro-wedding@mail.ru էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը:

Տվյալ դեպքում մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ուստի նման պայմաններում, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ առկա չէ Մասնակցի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանի որ նշված ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը գնահատման նիստում մերժում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու ապացույցը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6491-2019 գրությամբ «Հայարփի Քալանթարյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ